

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2013 թվականի
հուլիսի 11

ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013
ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

- Համայնքի ղեկավարի իրավասությունների շրջանակում իրավիրվել է ավագանու 3 նիստ, ընդունվել է ավագանու 10 որոշումներ՝ կապված բյուջեի փոփոխության, հողի հարկի և գույքահարկի գանձումների, ազոտական պարարտանյութի բաշխման, գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի օգտագործման և գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրության հաստատման մասին:
- Ընդունվել է համայնքի ղեկավարի 3 որոշումներ և 2 կարգադրություններ:
- Աշխատակազմի քարտուղարի կողմից արձակվել է 1 հրաման:
- Սարգսյանից և այլ կաազմակերպությունների կողմից ստացվել է 60 գրություններ:
- Գյուղապետարանի կողմից ելքագրվել է թվով 44 գրություններ:
- Համայնքի բնակիչներին հատկացվել է թվով 231 տարաբնույթ տեղեկանքներ:
- Նորավան համայնքի բնակիչների կողմից ստացվել է թվով 8 դիմումներ, և բոլորին տրվել է անհրաժեշտ լուծումներ:
- Կատարվում է քաղաքացիների ընդունելություն՝ օրենքով սահմանված կարգով:
- Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերին համապատասխան 3 առևտրի օբյեկտներին հատկացվում է ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն:
- 2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հողի հարկի և գույքահարկի գանձումները կազմում են

	<u>այլան</u> հազ.դրամ	<u>կատարող</u> հազ.դրամ	<u>%</u>
ա Հողի հարկ՝ 1-ին կիսամյակ	2450.0	1068.8	43.6
բ Գույքահարկ՝ 1-ին կիսամյակ	377.4	224.5	59.5
գ Հողի վարձավճար՝ տարեկան	188.0	-----	-----
դ Տեղական տուրքեր՝ տարեկան	81.0	63.8	78.7

2013 թվականի ընթացքում ստացվել է դոտացիա 6435.0 հազ.դրամ: Վճարվել է աշխատավարձ 5909.2 հազ.դրամ, սոց. վճարները կազմել են 1446.3 հազ.դրամ:

- Գրադարանի աշխատավարձը վճարվել է 277.8 հազ.դրամ:
- 2013 թվականի գարնանը դպրոցի, գյուղապետարանի շենքի և գերեզմանատան հարակից տարածքներում կատարվել է ծառատունկ և բարեկարգման աշխատանքներ:
- Համայնքային սեփականություն հանդիսացող 23.0 հա հողատարածքներ ավագանու որոշմամբ հատկացվել է վարձակալության 5 տարի ժամկետով մրցութային կարգով:
- Սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների շրջանակներում Նորավան գյուղական համայնքում կազմակերպվել է անասնաղբի և կենցաղային աղբի մաքրման աշխատանքներ և ստուգումներ:
- 2013 թվականի ընթացքում մեծ ուշադրություն և հսկողություն է սահմանվել շինարարական աշխատանքները օրինական կարգով կատարելու գործում:

- 2013 թվականի գարնանը կազմակերպվել և գյուղացիական տնտեսություններին է տրամադրվել անհրաժեշտ քանակությամբ պարարտանյութ և դիզելային վառելանյութ:
- Նորավան համայնքում ավագանու որոշմամբ կազմակերպվել է աղբահանություն շաբաթական երկու օր, որի համար հատկացվել է 480.0 հազ. դրամ:
- Գրասենյակային, կապի, էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը 2013 թվականի ընթացքում կազմել են 328.0 հազ.դրամ:
- Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած համայնքների օգնության հիմնադրամին նվիրատվություն է կատարվել 200.0 հազ դրամ:
- Նորավանի գյուղապետարանի կողմից վերահսկողություն է իրականացվում ընտանի կենդանիների ժամանակին բուժումներ կատարելու գործում:
Համայնքի անասնաբույժի կողմից ժամանակին իրականացվում է խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի ստուգումները, դաբաղի պատվաստումը, բրուցեյլոզի ստուգումները, խոզերի, մանր եղջերավոր անասունների անհրաժեշտ բուժումները և ստուգումները:
Իրականացվում է նաև 320 մեղվաընտանիքների վարիտոզի մշակումը:

Նորավանի գյուղապետարանի աշխատակիցների աշխատանքները 2013 թվականի ընթացքում անհրաժեշտ է կենտրոնացնել հետևյալ կարևոր խնդիրների վրա.

- Ապահովել բյուջեով նախատեսված մուտքերի հավաքագրումը ըստ եռամսյակների:
- Ստեղծել համապատասխան պայմաններ գրադարանի գործունեության համար:
- ՀՀ Կադաստրի Արմավիրի տարածքային ծառայության հետ համատեղ իրականացնել քարտեզագրման ժամանակ թույլ տրված սխալների ճշգրտումներ:
- Միջոցներ և հնարավորություններ փնտրել Նորավան գյուղական համայնքում մանկապարտեզ կառուցելու համար:
- Ավարտին հասցնել գերեզմանատան հարակից տարածքի բարեկարգման աշխատանքները:
- Իրականացնել կենտրոնական փողոցի լուսավորության աշխատանքները:
- Նորակառույց դպրոցի շենքից մինչև ք. Արմավիրի 8-րդ թաղամասը 800մ երկարությամբ ճանապարհը վերանորոգել, որը հնարավորություն կտա քաղաքաբնակ երեխաներին հաճախել դպրոց:

Նորավան գյուղական համայնքի բնակչության առջև ծառայած խնդիրներ կան, որոնց լուծման համար պահանջվում է մարզպետարանի միջնորդությունը՝ ֆինանսական միջոցներ ներդնելու համար.

- Գյուղամիջյան ճանապարհների և ոռոգման ցանցերի բարեկարգում:
- Մանկապարտեզի շենքի կառուցում:
- Մշակույթի տան կառուցում:
- Սելավատարի մաքրման աշխատանքների իրականացում:

ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ղԵՎԱԿԱՐ



(Handwritten signature)

Ա. ՄԻՔԱԵԼՅԱՆ

2013 թվականի
հուլիսի 11